

Հոգիս բանտեցի՛ք դղեակին մէջ ձեր,  
Եւրմակ ըստեղներ հուր դաշնամուրին,  
Պղղինձի թոյրեր, ոսկեցոլ կայծե՛ր...

## 7. ԶՐՏՈՒՔ

### *Շաւարշ Միսաքեանին*

Հոյիո՛յ, գետը կը թոջէ ցայգուն քամակն արծաթուած,  
Իր հորձքին մէջ ծեծելով անդուլ խարակն ու խուլթեր.  
Հոյիո՛յ, առուն յորդառատ դալարին ծոցն է նետուեր  
Գաղջ տարփանքովն իր ջուրին՝ ուր արեւը կ'ապրի դէռ:

Հակուրջի մը առկախած գիւղակն անդին կ'օրօրեն  
Անրջական հիւսուածքով խումբ մը ժայռի ըստուերներ.  
Վանքին բակը՝ կ'աղօթեն հսկայ ծառեր տարօրէն՝  
Որոնց տամուկ շուքին մէջ Աստուածամարն է կայներ:

Ու գիւղակին դեմ նստած, երիտասարդ ու պչոտ,  
Պարտեզները՝ վերէն վար վազող ջուրին կըսպասեն.  
Ա՛լ հափրացած խօլ գետին անարգաւանդ դարպասէն,  
Ու լռութիւնը խաճնող լուտանքներէն արհաւրոտ:

Գիշերային ջրտուքի ժամն է. լոյսին մէջ կայնած,  
Մըշակն անքուն կըսպասէ՛, ոտքը բոպիկ, բահն ուսին.  
Պարտեզներուն վրայ կ'իջնէ թեթեւ քօղբ մը միգամած,  
Ու ծղրիղներ՝ լուսնակով արբշիռ՝ անվերջ կը խօսին:

Ու կ'երկարի լուսարծաթ ժապաւենն այդ բարբառին,  
Ինչպէս փախչող ասուպի կոթունները կաթնաւետ.  
Աւագին վրայ ջուրերու կ'իյնայ շառաչը վետվետ,  
Խարոյկները՝ ոսկեբաշ՝ ուրեք ուրեք կը վառին:

Հոյիո՛յ, առուն կը հասնի ցանկապատին քովերէն  
Եւ երզի քուղ մը կու գայ պլլուած իր գօտիին.  
Սիւք մը կ'անցնի, տերեւներ ծա՛փ կը զարնեն ցնծագին.  
Վարէն ջուրը կը խայտայ, կը խնդայ լոյսն ալ վերէն:

Թումբերն անդուլ կը բացուին, ջուրն անդադար կ'ոռոգէ  
Վարդենիքը, թըթաստանն եւ ածուները բոլոր.